ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄՐՑԱ-ՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և մասնակցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի, տեղի ունեցավ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցանակաբաշխություն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սա Հայաստանում անցկացվող հանրակրթական դպրոցների ուսուցիչների երրորդ մրցույթն է: Մրցույցի հաղթողներին ավանդույթի համաձայն Նորին Սրբությունն անձամբ հանձնում է վկայականներ և դրամական պարգևներ:

Ուսուցիչների մեծարման հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանի ողջույնի խոսքով: «Ուսուցչին է վերապահված եղել դարեր ի վեր կրթելու, դաստիարակելու և փոխանցելու հաջորդ սերունդներին մեսրոպատառ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ»-ը, բացելու կրթության ու գիտության դուռը: ...Այս առաքելության կարևորության գիտակցությամբ է, որ Եկեղեցին շարունակում է հովանավորել, իր գուրգուրանքն ու ջերմությունը տածել հայ ուսուցչի նկատմամբ», - նշեց Հայր Սուրբը:

«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի ծրագիրը և իրականացված աշխատանքները ներկայացրեց ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության պետ տիկին Նարինե Հովհաննիսյանը:

Ապա «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ Եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն» և բնագիտական տարբեր առարկաների քառասունչորս ուսուցիչներ Ամենայն Հայոց Կաթողիկոսից ու ԿԳ նախարարից ստացան վկայականներ և խրախուսական մրցանակներ:

Մրցանակաբաշխության ավարտին ուսուցիչների անունից շնորհակալական խոսքով հանդես եկավ տիկին Անահիտ Հովսեփյանը (Տավուշի մարզ):

Հանդիսությանը ներկա էին նաև «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հովանավորներ Իրմա և Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերը (ԱՄՆ), որոնց ազնիվ բարերարությամբ նաև տպագրվել է «Հայ Եկեղեցու պատմության» դասագրքերի մեթոդաբանական ձեռնարկը: «Ուրախ եմ և հպարտ, որովհետև շնորհիվ ներկա վեհանձն ու պատվական ուսուցիչների՝ շարունակվում է Մեսրոպ Մաշտոցի առաքելությունը: ...Փափագում ենք շնորհավորել, շնորհակալություն հայտնել այն ուսուցիչներին, որոնց շնորհիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն այսօր ունի մի Հայրապետ, որը ոչ միայն նվիրված է հայ լեզվին, հայ դպրոցին, հայեցի դաստիարակությանը, այլև իր կատարած գործնական քայլերով մեզ ներշնչում է և սատարում է մեր ազգային-հոգևոր հարստությունների առավել հարստացմանը, տարածմանը և հավերժացմանը»,- նշեց տիկին Սիլվա Տեր-Ստեփանյանը:

Հանդիսության կարևորության մասին իր մտածումները ներկայացրեց ՀՀ Կրթության և գիտության նախարարը՝ կարևորելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ՀՀ Կրթության ու գիտության նախարարության միջև սերտ համագործակցությունը և խորին շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ կրթական ոլորտի նկատմամբ իր ցուցաբերած ուշադրության համար: Նախարարն անդրադարձավ նաև ոլորտի առջև ծառացած մարտահրավերներին. «Եթե մենք չունենանք մոբիլ, հզոր, ազգային հենքի վրա կանգնած կրթություն, մենք չենք կարող դիմագրավել 21-րդ դարի մարտահրավերները»: Ապա մասնավորաբար դիմելով հայագիտական առարկաների ուսուցիչներին՝ պրն Լ. Մկրտչյանն ասաց. «Դուք եք, որ դարերով կրել եք մեր ժողովրդի և' ցավը, և' նրա ցավը տեղ հասցնելու խորհուրդը, և՛ նաև նրա ապագան: Մենք միասին պարտավոր ենք այնպես անել, որ մեր աշակերտները գիտատեխնիկական այս դարաշրջանում սիրեն իրենց Եկեղեցին, սիրեն իրենց ազգը, Հայրենիքն ու պետությունը»:

Հանդիսության ավարտին իր խոսքն ու պատգանը ներկաներին ուղղեց Ն.U.O.S.S Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Հայրապետական իր գնահատանքն ու օրհնությունը բերելով քառասունչորս ուսուցիչներին՝ «Լավագույն ուսուցիչ» բարձր պատվին արժանանալու համար: «*Ուսուցիչ լինելը մեծ պատիվ է և պատասխանատվություն: Այն նշանակում է պատասխանատվություն կրել ազգի լինելության, այդ լինելության որակի համար: Մեր ժողովուրդն իր գոյությամբ պարտական է հայ ուսուցչին: Եվ փա՛ռք Աստծո, այն պատմությունն ու մշակույթը, որով հպարտանում է մեր ազգը, կերտված է հայ ուսուցչի ոգու ու մտքի շնորհիվ, նրա կրթության ու դաստիարակության արդյունքն է: Այսօր այդ բարի ավանդույթների կրողն եք դուք, ձեզ է հանձնված կերտելու մեր ժողովրդի նորօրյա պատմությունը*», - մասնավորաբար նշեց Նորին Սրբությունը: Վեհափառը վստահություն հայտնեց, որ հայ ուսուցիչը պիտի կարողանա կերտել ազնիվ քաղաքացիներ, հայի ոգին, պիտի կարողանա սնել հայ մանուկներին հայ ժողովրդի հարատևման ու ինքնության, նկարագրի ու էության մաքրամաքուր ակունքից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որտեղից դարեր շարունակ սնունդ է առել հայորդու ոգին ու հավատը:

Հայոց Հայրապետը նաև ուրախություն հայտնեց Իրմա և Սիլվա Տեր-Ստեփանյան քույրերի ներկայության առիթով՝ իր օրհնությունը բերելով նրանց՝ հայեցի կրթության նկատմամբ նրանց ազնվահոգի, հայրենասեր և նախանձախնդիր վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը բերեց ԿԳ նախարարին և նախարարության ողջ պաշտոնեությանը, ովքեր աջակցեցին, որպեսզի մեր Եկեղեցին կրթական իր առաքելությունը նաև ներկա ժամանակի պայմաններում իրականացնի և իր նպաստը բերի կրթության նվիրական գործին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ